

ՍՈՎԵՏԱՀԱՅ ԲԱՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱՆՑԱԾ ՈՒՂԻՆ

Ա. Մ. ՆԱԶԻՆՅԱՆ

Սովետահայ բանագիտությունը անցյալից ժառանգած իր ավանդներով հարուստ ու հետաքրքրական նախապատմություն ունի: Մեծ ու կարևոր գործ են կատարել անցյալի մեր մտավորական գործիչները հայ բանահյուսության հավաքման, հրատարակման և ուսումնասիրության ասպարեզում: Այսուհանդերձ, պետք է նկատել, որ հասարակական մտքի այդ երախտավոր մշակների աշխատանքը եղել է անձնական նախաձեռնության արդյունք: Բացակայել են պետական ու գիտական կազմակերպությունների հոգատարությունն ու խրախուսանքը այդ աշխատանքների նկատմամբ:

Ինչպես գիտության մյուս բնագավառների, այնպես և հայ բանահյուսության բուռն ծաղկումն ու բարգավաճումն սկսվում է Հայաստանում սովետական կարգերի հաստատումից հետո: Երևանի պետական համալսարանի հիմնադրման օրից (1920 թ.) հայ բանահյուսությունը դասավանդվում է համապատասխան ֆակուլտետներում որպես ինքնուրույն առարկա: Հայաստանի նորաստեղծ գիտա-հետազոտական հիմնարկների մեջ են ընդգրկվում նաև բանահյուսության գծով տարվող աշխատանքները: 1925—26 թթ. հիմնադրված Հայաստանի առաջին գիտա-հետազոտական հիմնարկության՝ գիտության և արվեստի ինստիտուտի համապատասխան բաժնում իր տեղն է գրավում հայ բանագիտությունը: Հետագայում հայ բանահյուսության բաժինը ընդգրկվում է վերակառուցվող գիտա-հետազոտական նոր հիմնարկների կազմում (Հայաստանի կուլտուրայի պատմության ինստիտուտ, պատմության ու գրականության ինստիտուտ, ՍՍՀՄ ԳԱ Արմֆանի գրականության և լեզվի ինստիտուտ, Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտ)՝ այժմ ՀՍՍՀ ԳԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի մի բաժինն է և բանահյուսության հետ միավորում է նաև ժողովրդական երաժշտության և պարարվեստի ուսումնասիրության աշխատանքները:

Այս հիմնական օջախից բացի հայ բանահյուսության գծով աշխատանքներ են տարվել Հայաստանի հանրապետական ժող. ստեղծագործության տան, ԳԱ արվեստի ինստիտուտի, կոմպոզիտորների միության, Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի և այլ կազմակերպությունների կողմից:

Սովետահայ բանագիտության հիմնական խնդիրներից մեկը հենց սկզբից դառնում է ժողովրդական բանահյուսության նյութերի հավաքումն ու գրառումը: Դա շատ կարևոր ու առաջնահերթ խնդիր էր: Սովետահայ բանագետները բարձր գնահատելով նախորդների մեծ աշխատանքը, շարունակել են այդ գործը նոր եռանդով: Բանահյուսական նյութերի հավաքման գործը նոր փուլում առաջնահերթ է դառնում հատկապես այն պատճառով, որ ուժեղանում է բանահյուսական ստեղծագործությունների մոռացման ու անհետացման վտանգը:

Ժողովրդական բանահյուսության հավաքման ու գրառման համար կիրառվել են տարբեր մեթոդներ ու եղանակներ. կազմակերպվել են կոլեկտիվ գիտական արշավախմբեր (էքսպեդիցիաներ), որոնց մասնակցել են բանագետներ, երաժշտագետներ, պարագետներ, ազգագրագետներ և այլն: Գործել են նաև զուտ բանահյուսական արշավախմբեր, կազմակերպվել են անհատական բանահավաքների առարումներ, որոնք զրի են առել ինչպես բանահյուսության, այնպես էլ ժողովրդական երաժշտության ու պարարվեստի ստեղծագործությունները: Բանահյուսական բաժնի (սեկտորի) աշխատանքներից բացի բանահյուսական նյութեր են հավաքել նաև առանձին անհատներ (ուսուցիչներ, ուսանողներ և այլ մասնագիտության տեր մարդիկ): Ժողովրդական պոեզիայի գրառմանը զուգընթաց ձայնագրվել են նաև նրանց եղանակները (մագնիսոֆոնով), ինչպես նաև երաժշտական և պարային մեղեդիները: Մագնիսոֆոնով ձայնագրվել են նաև պատմողական ժանրերից առանձին կտորներ՝ պատմելու արվեստը, ոճը, լեզվի ինտոնացիան ու ելևէջները ուսումնասիրելու համար: Լուսանկարել են ասացողներին, երգողներին, պարողներին:

Առաջին գիտական ազգագրական խմբարշավը կազմակերպվել է 1926 թ. գիտության և արվեստի ինստիտուտի կողմից, ճանաչված ազգագրագետ Եր. Լալայանի ղեկավարությամբ: Գիտարշավը 40 օրվա ընթացքում լինում է Կոտայքի գյուղերում, հավաքում և զրի առնում հարուստ ազգագրական և բանահյուսական նյութեր: Բանահյուսական նյութերից ուշագրավ են հերիաթներն ու առակները (շուրջ 50 հատ), ժողովրդական երգ-խաղիկները (շուրջ 400 հատ) և այլն:

1932—1933 թթ. Կուլտուրայի պատմության ինստիտուտի կողմից գիտարշավներ են կազմակերպվում Թալինի, Աշտարակի և Վեդիի շրջանները: Այդ գիտարշավները ղեկավարում էր Կ. Մելիք-Օհանջանյանը, մասնակցում էին Սպ. Մելիքյանը, Սր. Կիսիցյանը, Ա. Ղանալանյանը, Հ. Ջեզին, Շ. Կուժիկյանը: Գիտարշավի ջանքերով հայտնաբերվում և զրի են առնվում «Սասնա ծռեր» էպոսի վեց նոր, արժեքավոր պատումներ (Սասունի, Այաշկերտի, Մոկաց և Շատախի բարրառներով), «Մոկաց Միրզա», «Ասլան-աղա» հայտնի վիպական երգերի նոր տարբերակներ, ինչպես նաև բազմաթիվ հերիաթներ, առակներ, զրույցներ, երգեր և այլ ստեղծագործություններ:

Սկսած 1934 թ. նոր թափ է ստանում ժողովրդական բանահյուսության հավաքման և հրատարակման գործը: Դա կապված էր զրոգների համամիութենական 1 համագումարում Ա. Մ. Գորկու նշանավոր կոչի հետ, որտեղ ասված էր. «Կրկնում եմ՝ խոսքի արդիւնտի սկիզբը ֆոլկլորն է: Հավաքեցեք ձեր ֆոլկլորը, սովորեցեք նրանից, մշակեցեք այն»¹: Այս կոչից հետո, ինչպես ամբողջ Սովետական Միության մեջ, այնպես էլ Հայաստանում սկսեցին ավելի մեծ ուշադրություն դարձնել ժողովրդական բանահյուսության հավաքման, հրատարակման և հետազոտման գործին: 1934 թ. Հայաստանի պատմության և գրականության ինստիտուտը սկսում է ինչպես խմբարշավների, այնպես և առանձին բանահավաքների միջոցով բանագիտական հետազոտության ենթարկել Հայաստանի շրջանները: Այս շրջանում բանահավաքական եռանդուն գործունեություն է ծավալում աշուղագետ, բանահավաք Գ. Թարվերդյանը (Վերդին): Գ. Թարվերդյանի հավաքած նյութերի մեջ կարևոր են սովետական շրջանի բա-

¹ Մ. Գորկի, Գրական-հրապարակախոսական հոդվածներ, Երևան, 1949, էջ 335:

նահյուսական նյութերը, որոնց մեջ հատկապես արժեք են ներկայացնում լենինին նվիրված ստեղծագործությունները («Լենին փաշա» վիպերգ, Երզնր, զրույցներ և այլն)։

1941 թ. սկսած բանահավաքչական աշխատանքները ընթանում են գերադանցապես բանահավաքների անհատական գործուղումներով և տեղական գրառումներով։ Առանձնապես հարուստ նյութեր են հավաքվում Աշտարակի, Էջմիածնի, Ախալքալակի, Ախալցխայի, Ղուկասյանի, Զանգեզուրի և այլ շրջաններից։ Հավաքված նյութերի մեջ աչքի ընկնող տեղ են գրավում Հայրենական պատերազմին նվիրված ստեղծագործությունները։ Բանահավաքչական այս աշխատանքներին մասնակցում էին Վ. Բդոյանը, Ս. Խանդադյանը, Հ. Զրնդին և ուրիշներ։

1950 թ. սկսած արվեստների պատմության ու տեսության սեկտորի կազմակերպած արշավախմբերին մասնակցել և բանահյուսական նյութեր են հավաքել Ա. Նադինյանը և Ս. Հարությունյանը։ 1959 թ. Հայաստանի գիտությունների ակադեմիայի միացյալ գիտական արշավախմբի կազմում Խոստովի մարդի հայաբնակ վայրերից բանահյուսական և երաժշտական հարուստ նյութեր հավաքեցին նաև Վ. Սվազլյանը և Մ. Մանուկյանը²։

1960 թ. հնագիտության և աղագրության ինստիտուտի ժողովրդական բանահյուսության սեկտորի մշտական միացյալ խմբարշավը Ա. Նադինյանի զբոսաշրջությանը պարբերաբար սկսեց հետադուրել Հայաստանի շրջանները, հարևան հանրապետությունների հայաբնակ վայրերը՝ զրի առնելով ու ձայնագրելով ժողովրդական բանահյուսության, երաժշտության ու պարարվեստի ստեղծագործությունները։ Այս եղանակով հետադուրվեցին և ուսումնասիրվեցին Իջևանի (1960 թ.), Նոյեմբերյանի (1961 թ.), Կարմիրի (1962 թ.), Արխաղիայի, Ալավերդու (1963 թ.), Ստեփանավանի (1964 թ.), Շիրակ-Լենինականի (1965 թ.) Աշտարակի (1966 թ.), Զանգեզուրի, Լեռնային Ղարաբաղի ու Գանձակի (1967 թ.) շրջանները։

Արշավախմբերից բացի շարունակվեցին գործուղումները Հայաստանի և այլ հանրապետությունների հայաբնակ վայրերը։

Այդ աշխատանքներում իրենց նուանդուն և արդյունավետ գործունեությամբ աչքի ընկան հատկապես գիտաշխատողներ Ա. Կարապետյանը, Վ. Սվազլյանը, Թ. Գևորգյանը, Մ. Առաքելյանը, Ժ. Խաչատրյանը։

Գիտարշավներից ու անհատական գործուղումներից բացի բանահյուսության սեկտորը արժեքավոր նյութեր է ձեռք բերել նաև առանձին անհատներից, որոնք օրինակով բանահյուսությունը, իրենց նվիրել են այդ գործին։ Այդ նյութերից ուշագրավ են Լեռնային Ղարաբաղի (Մ. Գրիգորյան), Մոկսի (Ա. Բարսեղյան, Ա. Գարրինյան), Շիրակի (Պ. Բարսեղյան) բանահյուսական նյութերն ու նմուշները։

Տարբեր ժամանակներում և տարբեր եղանակներով հավաքված բանահյուսական այս նյութերը կենտրոնացված են հնագիտության և աղագրության ինստիտուտի բանահյուսական արխիվում։ Հավաքչական այդ աշխատանքների շնորհիվ հարստացել է հայ բանահյուսության աղգային գանձարանը, ընդլայնվել նրա տեղագրական ընդգրկումը, ավանդական բանահյուսության հայտնի

² Տե՛ս նրանց հաշվետվությունները Հայկական ՍՍՀ ԳԱ «Տեղեկագրի» (հասարակական գիտություններ) 1961 թ. N° 10-ում։

ստեղծագործությունների կողքին հայտնաբերվել են նոր ստեղծագործություններ և բազմաթիվ հետաքրքրական տարբերակներ, որոնք ամբողջացնում և լրացնում են բանահյուսական յուզյալ ժանրն ու տեսակը:

Հավաքչական աշխատանքին զուգընթաց խոշոր հաջողություններ է ձեռք բերել սովետահայ բանագիտությունը՝ հայ բանահյուսության հուշարձանների հրատարակության և գիտական հետազոտության ասպարեզում: Առաջնորդվելով մարքս-լենինյան առաջավոր մեթոդոլոգիայով, հայ բանագետները իրենց աշխատություններում ուսումնասիրել ու գնահատել են անցյալի մեր մշակույթի այդ լավագույն ժառանգությունը և վեր հանել նրա արժեքն ու նշանակությունը:

Սովետական շրջանում հայ բանագիտության խոշորագույն նվաճումներից մեկը «Սասնա ծռեր» ժողովրդական հերոսական վեպի գիտական, ամբողջական հրատարակությունն էր, որն իրականացրել են բազմավաստակ գիտնականներ Մ. Աբեղյանն ու Կ. Մելիք-Օհանջանյանը: Ի մի հավաքելով անցյալում գրի առնված ու զանազան աղբյուրներում տպագրված էպոսի պատումները, ինչպես նաև սովետական շրջանում հայտնաբերված անտիպ պատումները, նրանք պատրաստել են «Սասնա ծռեր» էպոսի գիտական հրատարակությունը, բաղկացած երեք սովարահատոր գրքերից³:

Այս կապիտալ հրատարակությունը, որն ամփոփում է իր մեջ էպոսի շուրջ 50 պատումներ, կատարված է ժողովրդական սկզբնաղբյուրի լեզվական, գաղափարական ու գեղարվեստական-արտահայտչական առանձնահատկությունների ստույգ պահպանմամբ և հմտությամբ: Առաջին հատորը բացվում է «Սասնա ծռեր» ժող. վեպի բովանդակալից ներածությամբ: Պատումների ստուգված բնագրերին կից տրված են անհրաժեշտ բոլոր բացատրություններն ու ծանոթագրությունները, իսկ վերջին հատորը եզրափակվում է բառարանով, հատուկ անունների, տեղանունների ցանկերով, պատումների համառոտ ճյուղագրությամբ և այլն:

Հայ բանագիտության պատմության կարևորագույն էջերից մեկը հանդիսացավ «Սասունցի Դավիթ» ժող. վեպի հազարամյա հոբելյանը 1939 թ., որը նշվեց Սովետական Միության եղբայրական բոլոր ժողովուրդների կողմից: Այն էպոսի մասսայականացման խոշոր ազդակ հանդիսացավ: Հոբելյանի օրերին լույս տեսավ էպոսի համահավաք բնագիրը⁴ հայերեն և ռուսերեն՝ ակադեմիկոս Հ. Օրբելու ընդհանուր խմբագրությամբ ու ծավալուն առաջաբանով⁵: Այդ համահավաք բնագիրը ամբողջությամբ կամ հատվածաբար լույս ընծայվեց նաև եղբայրական ժողովուրդների լեզուներով: էպոսի բազմապիսի հարցերին նրվիրված հետազոտություններով ու ուսումնասիրություններով հանդես եկան բանագետները, գրականագետները, պատմաբանները⁶:

Հոբելյանով, սակայն, չսահմանափակվեց հետաքրքրությունը հայկական էպոսի նկատմամբ: Հետագայում նույնպես շարունակվեց «Սասնա ծռեր» էպո-

3 «Սասնա ծռեր». խմբագրեց պրոֆ.-դր. Մանուկ Աբեղյանը, աշխատակցությամբ Կարապետ Մելիք-Օհանջանյանի, Երևան, Ա հատոր, 1936, Ի հատոր Ա մաս, 1944, Բ հատոր Բ մաս, 1951:

4 «Սասունցի Դավիթ» էպոսի համահավաք բնագիրը պատրաստեցին Մ. Աբեղյանը, Գ. Արովը և Ա. Ղանալանյանը:

5 Այդ առաջաբանը հետագայում լրացված ու ամբողջացված լույս տեսավ առանձին գրքով: Տե՛ս Հ. Օրբելի, Հայկական հերոսական էպոսը, Երևան, 1956: Նույնը՝ ռուսերեն:

6 Տե՛ս «Սասունցի Դավիթ» հոբելյանական ժողովածուներ, հրատարակված Երևանի պետ-համալսարանի և Արմֆանի կողմից, Երևան, 1939:

սի հետազոտությունը էպոսին նվիրված աշխատություններից է Գր. Գրիգորյանի ծավալուն մենագրությունը⁷, որտեղ քննության է առնվում էպոսի ժողովրդայնության պրոբլեմը (գաղափարական բովանդակության հիմնական գծերը, գեղարվեստական կատարելության հարցերը և արտահայտչական միջոցների հատկանիշներն ու ֆունկցիաները)։

Սովետահայ բանագիտության մեջ շատ կարևոր տեղ է գրավում Մ. Աբեղյանի մեծարժեք մի ուսումնասիրությունը⁸, որը միայն վերջերս արժանացավ տպագրության։ Այս աշխատությունը բաղկացած է հայ վիպական բանայուսության տարրեր տեսակների ու հարցերի մասին հեղինակի նախկինում կատարած ուսումնասիրություններից, որոնք նա վերամշակել, համակցել ու ձուլել է որպես հայոց վիպական բանահյուսության ամբողջական ու հետևողական շարադրանք՝ զարգացման իր փուլերով ու օրինաչափություններով։

Բանահյուսական հուշարձանների հրատարակությունների շարքում աչքի ընկնող տեղ է գրավում հայ ժողովրդական առած-ասացվածքների հրատարակությունը, որը կատարել է Ա. Ղանալանյանը⁹։ Տարիների ընթացքում նա ի մի է հավաքել տպագիր ու անտիպ աղբյուրներում ցրված շուրջ 40000 առածներն ու ասացվածքները, մշակել դրանց դասակարգման ու խմբավորման համակարգը և բնագրին կից ներկայացրել հայկական առած-ասացվածքների բազմակողմանի ու մանրակրկիտ ուսումնասիրությունը։

Հայկական բանահյուսության վիպական ժանրի կարևորագույն աշխատանքներից է նաև «Հայ ժողովրդական հեքիաթներ» բազմահատոր հրատարակությունը, որը նախաձեռնվել է վերջին տարիներս և արդեն լույս են տեսել I—V և X հատորները¹⁰։ Այս հրատարակության մեջ ընդգրկված են պատմական Հայաստանի բնակավայրերից հավաքված տպագիր և անտիպ բոլոր հեքիաթները՝ ըստ ազգագրական-տեղագրական շրջանների։

Հայկական հեքիաթների ամբողջական հրատարակությամբ հնարավորություն չէ բացվում ոչ միայն մեր բանահյուսության այդ հարուստ ու հնագույն ժանրի բազմակողմանի ուսումնասիրության համար, այլև առատ նյութեր են մատուցվում հայ ժողովրդի ազգագրության, անցյալի կյանքի ու կենցաղի, հավատալիքների, աշխատանքային առօրյայի լուսաբանման համար։

Սովետահայ բանագիտության ասպարեզում նշանակալից աշխատանքներ են կատարվել հայ ժողովրդական քնարական բանահյուսության հրատարակության և ուսումնասիրության գծով։

Դեռևս 1930-ական թթ. Մ. Աբեղյանը հրատարակում է մի ուսումնասիրություն հին գուսանական ժողովրդական երգերի մասին¹¹, որտեղ գիտականորեն հաստատում է Քուչակին վերագրվող միջնադարյան տաղերի ժողովրդ-

7 Գր. Գրիգորյան, Հայ ժողովրդական հերոսական էպոսը, Երևան, 1960։

8 Մ. Աբեղյան, Հայ վիպական բանահյուսություն, Երկեր, հատ. Ա, Երևան, 1966։

9 Ա. Տ. Ղանալանյան, Հայկական առածանի. տեքստ և հետազոտություն ժողովրդական առածների ու ասացվածքների, Երևան, 1951։ Նույնի 2-րդ հրատ.՝ «Առածանի», Երևան, 1960։

10 «Հայ ժողովրդական հեքիաթներ», հատ. 1, Այրարատ, Երևան, 1959։ Հատ. 2, Այրարատ, Երևան, 1959։ Հատ. 3, Այրարատ, Երևան, 1962։ Հատ. 4, Շիրակ, Երևան, 1963։ Հատ. 5, Արցախ, Երևան, 1966։ Հատ. 10, Տուրուբերան (Մուշ-Քույանրիս), Երևան, 1967։

11 Մ. Աբեղյան, Հին գուսանական ժողովրդական երգեր, «Հայաստանի խՈՂ պետ. համալսարանի գիտական տեղեկագիր», 1927, № 2—3։ 1928, № 4։ 1930, № 6։ Նույնը՝ առանձին գրքով, 1930։

դականության հարցը: Ավելի ուշ, Մ. Արեղյանի ձեռքով հրատարակվում է գուսսոնական ժողովրդական տաղերի (հայրեններ և անտունիներ) ժողովածուն¹², միջնադարյան ձեռագիր մատյանների բաղդատությամբ և ժողովրդական սկզբնաղբյուրների համեմատությամբ: Նույն 1940 թ. լույս է տեսնում նաև Մ. Արեղյանի կազմած և խմբագրած ժողովրդական խաղիկների սովորածավալ ժողովածուն¹³:

Հայ ժողովրդական քնարական բանահյուսության շատ տարածված ու ծագումով հին մի այլ տեսակն է ընդգրկում Ա. Ղանալանյանի հրատարակած ժողովածուն՝ ուսումնասիրությամբ հանդերձ¹⁴: Այստեղ ի մի են հավաքված հայ ժողովրդի աշխատանքի բազմապիսի երգերը (գութանի, սերմնացանի, հնձի, սալլի, կալի, քաղհանի, սանդի, խնոցու և այլ երգեր):

Աս. Մնացականյանը օգտագործելով Մատենադարանի ձեռագիր մատյանները, 1956 թ. հրատարակեց միջնադարյան ժողովրդական երգերի մի ժողովածու՝ ուսումնասիրությամբ և ծանոթագրություններով¹⁵: Այնուհետև, տարբեր ժամանակներում սովետահայ բանագիտության ասպարեզում երևան են գալիս մի շարք ժողովածուներ և ուսումնասիրություններ՝ քնարական բանահյուսության վերաբերյալ¹⁶:

Անցյալի հայ բանագիտության կողմից վիպական բանահյուսության փոքր ծավալի տեսակները (հանելուկ, աղոթք, օրհնանք, անեծք և այլն) քիչ ուշադրության են արժանացել:

Սովետահայ բանագիտության մեջ այդ բացը վերացվեց Ս. Հարությունյանի՝ ժողովրդական հանելուկների համահավաք ժողովածուի հրատարակությամբ և հանգամանալից ուսումնասիրությամբ¹⁷, որտեղ ցույց է տրվում դրանց կուլտուր-պատմական արժեքն ու նշանակությունը:

Հայ բանագիտության առաջնահերթ պրոբլեմներից է եղել գրականության և բանահյուսության փոխադարձ կապերի ուսումնասիրությունը: Այդ ուղղությամբ սովետական շրջանում լույս են տեսել մի շարք աշխատություններ¹⁸:

¹² «Գուսսոնական ժողովրդական տաղեր». հայրեններ և անտունիներ (ուրախության, սիրո, օրորոցի, լացի): Հավաքեց և խմբագրեց գիտության վաստակավոր գործիչ, պրոֆ.-դր. Մ. Արեղյանը, Երևան, 1940:

¹³ «Ժողովրդական խաղիկներ». գուղանան փոքր երգեր իրենց փոփոխականներով: Խմբագրեց պրոֆ.-դր. Մ. Արեղյանը, մասնակի աշխատակցությամբ Կոմիտասի, Երևան, 1940:

¹⁴ «Հայ շինականի աշխատանքի երգերը». կազմեց և խմբագրեց Արամ Ղանալանյանը, Երևան, 1937:

¹⁵ Աս. Մնացականյան, Հայկական միջնադարյան ժողովրդական երգեր, Երևան, 1956:

¹⁶ «Հայ ժողովրդական պանդխտության երգեր». տեքստը պատրաստեց, ներածությունը գրեց և ծանոթագրեց Մ. Մկրտչյանը, Երևան, 1965: Ա. Ս. Ղազիյան, Հայ ժողովրդական ողբի և զինվորի երգեր, ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր», 1964, № 10: Խ. Ա. Փոքրյան, Նոր նախնականի հայ ժողովրդական բանահյուսությունը, Երևան, 1965:

¹⁷ Ս. Հարությունյան, Հայ ժողովրդական հանելուկներ (ուսումնասիրություն): Երևան, 1960: Նույնի՝ Հայ ժողովրդական հանելուկներ (բնագիր, ներածություն, ցանկեր), Երևան, 1965:

¹⁸ Ա. Ղանալանյան, Պոռչյանը և ժող. բանահյուսությունը, 1937: Նույնի՝ Արույանը և ժող. բանահյուսությունը, 1940: Ավ. Իսահակյանի ստեղծագործության ժողովրդական ակունքները, 1953: Սայաթ-Նովայի ստեղծագործության ժողովրդական ակունքները, 1963: Ա. Նազիկյան, Սովետահայ գրականությունը և ժողովրդական բանահյուսությունը, Երևան, 1954:

Ավանդական բանահյուսության հուշարձանների հրատարակման ու հետադոտության զուգընթաց սովետահայ բանագիտությունը խոշոր տեղ է տվել ժամանակակից բանահյուսության ստեղծագործությունների հրատարակությանն ու ուսումնասիրությանը: Տարբեր ժամանակներում լույս են տեսել մի շարք ժողովածուներ և ուսումնասիրություններ¹⁹, որոնք ցուցադրում և բացահայտում են նոր շրջանի բանահյուսության առանձնահատկությունները, սոցիալիստական պայմաններում բանահյուսության ունեցած դերն ու նշանակությունը:

Հիշատակության արժանի են սովետահայ բանագիտության ասպարեզում այն աշխատանքները, որոնք վերաբերում են հարևան ժողովուրդների ֆոլկլորային կապերին²⁰: Սովետահայ բանագիտության ասպարեզում կատարված աշխատանքների մեջ ուշադրության արժանի են հայ բանահյուսության ստեղծագործությունների ուսերեն և այլ լեզուներով թարգմանությունները²¹:

Բանահյուսության հետ սերտորեն կապված են պարն ու երաժշտությունը: Այս առումով էլ սովետահայ բանագիտության անցած ուղին բնութագրելիս անկարելի է անտեսել ժողովրդական երաժշտության ու պարարվեստի ասպարեզում կատարված աշխատանքները, որոնց մեջ ուղղակի թե անուղղակի ձևով արժարժվում են և շոշափվում բանահյուսության հետ առնչված մի շարք հարցեր (երաժշտության ու պարի հետ խոսքի ունեցած հարաբերությունը և այլն): Սովետական շրջանում ժողովրդական երաժշտության ու պարարվեստի ինչպես հավաքման, այնպես և հրատարակման ու հետազոտման ասպարեզում իրենց վաստակն ունեն ավագ և կրտսեր սերնդի արվեստագետներ Սպ. Մելիքյանը, Ք. Քուշնարյանը, Սր. Լիսիցյանը, Մ. Աղայանը, Ա. Քոչարյանը, Ռ. Աթայանը, Մ. Մուրադյանը, Վ. Սամվելյանը, Ալ. Թադևոսյանը, Մ. Բրուտյանը, Մ. Մանուկյանը, Ժ. Խաչատրյանը, էմ. Պետրոսյանը, Ա. Հարությունյանը և ուրիշներ:

Նոր շրջանի հայ բանագիտության պատկերը թերի կլինի, եթե նկատի չառնվեն նաև սփյուռքում կատարվող բանագիտական աշխատանքները: Առանձնապես կարևոր արժեք են ներկայացնում հայրենակցական ընկերությունների կողմից նախաձեռնվող և իրականացվող Արևմտյան Հայաստանի ազգագրական տարբեր շրջաններին վերաբերող պատմա-ազգագրական, տեղագրա-

19 «Էկենինը հայ ֆոլկլորի մեջ». խմբագրություն և ներածություն Կ. Մելիք-Օհանջանյանի, աշխատակցությամբ Գ. Թարվերդյանի և Ա. Ղանալանյանի, Երևան, 1936: «Հայկական խորհրդային ֆոլկլորը» (ժողովածու), Երևան, 1938: Ա. Ն ա ղ ի ն յ ա ն, Սովետահայ ժողովրդական բանահյուսությունը, Երևան, 1957: Գ. Բ. Գ Ր Ի Դ Ո Ր Յ Ա Ն, Սովետահայ վիպերգերն ու պատմական երգային բանահյուսությունը, Երևան, 1965:

20 Կ. Մ ե լ ի ք - Օ հ ա ն ջ ա ն յ ա ն, Ֆիրդուսին և Իրանի վիպական մոտիվները «Շահ-նամե»-ում և հայ մատենագրության մեջ: Տե՛ս «Ֆիրդուսին». բանաստեղծի ծննդյան 1000-ամյակին նվիրված ժողովածու, Երևան, 1934: «Քյոո-Օղլի». ժողովրդական վիպասանություն: Հավաքեց և գրի առավ Գ. Թարվերդյանը, Խ. Սամվելյանի առաջաքանով, Երևան, 1941: Բ. Չ ու գ ա ս զ յ ա ն, Հայ-իրանական դրական առնչություններ, Երևան, 1963: Ա. Երևանի, Հայ-ադրբեջանական ժողովրդական բանահյուսության կապերը (ադրբեջաներեն), Երևան, 1958: Հ. Ջ ն գ ի, Հայ և քուրդ ժողովուրդների բարեկամության արտացոլումը բանահյուսության մեջ, Երևան, 1965: Ա. Շ ա հ ս ու վ ա Ր Յ ա ն, «Շահ-նամե» և հայկական աղբյուրները, Երևան, 1967:

21 «Սասունցի Դավիթ» էպոսը բացի ուսերենից (ունեցել է մի քանի հրատարակություն) թարգմանվել է անգլերեն, ֆրանսերեն, ռումիներեն, լեհերեն, չինարեն: Հայ ժողովրդական հեքիաթներն ունեցել են ռուսերեն երկու հրատարակություն, ինչպես նաև թարգմանվել են անգլերեն, ռումիներեն, հունգարերեն, չեխերեն:

կան, բանահյուսական ժողովածուները: Այդպիսի արժեքավոր ժողովածուներից են Ակնին, Խարբերդին, Երզնկային, Մարաշին, Տարոն-Տուրուբերանին, Վասպուրականին և այլ շրջաններին նվիրված հատորները: Մեծ արժեք է ներկայացնում ամերիկահայ երաժշտագետ-բանահավաք Մ. Թումաճանի ժողովրդական երաժշտության ու բանահյուսության հավաքածուն, որը այժմ հեղինակի անմիջական մասնակցությամբ տպագրության են պատրաստում Արվեստի և Հնագիտության ու ազգագրության ինստիտուտները: